

Կարծիք

Աննա Գազիկի Եղյանի “Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգը” ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը իսկապես արդիական է՝ պայմանավորված համաշխարհային շուկայի պահանջներով, միջազգային հաղորդակցության ինտենսիվացմամբ և աշխատանքային նոր հնարավորություններով։ Աստիճանաբար փորձ է արվում ՀՀ-ում ճարտարապետական ուղղվածության բազում ֆակուլտետներում նախկինում կիրառվող ռուսալեզու կամ Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսած ճարտարապետական անգլերենի ուսուցման բուհական դասագրքերը փոխարինել անգլերեն դասագրքերով։ Այս համատեքստում ճարտարապետի՝ ճարտարապետական բառապաշարի անգլերեն իմացությունը դարձել է առաջնային անհրաժեշտություն, քանի որ ապագա ճարտարապետի առջև խնդիր է դրված անգլերենով ընթերցել մասնագիտական տեքստեր, թարգմանել դրանք, հասկանալ հաղթահարել տեքստում առկա քերականական դժվարությունները։

Աննա Գազիկի Եղյանն իրավացիորեն գտնում է, որ ճարտարապետական բառապաշարի ուսուցումը պահանջում է տարբեր մոտեցումներ՝ հաշվի առնելով ուսանողների առկա լեզվական գիտելիքները, հաղորդակցական և սոցիալական հմտությունները։ Ըստ ատենախոսի, ժամանակակից ուսանողը պետք է կարողանա օգտվել անգլերեն գրականությունից, անհրաժեշտության դեպքում կատարի մի լեզվից մյուսը փոխադրում, ուսումնասիրի տվյալ բառի ծագումնաբանությունը՝ ուսումնառության գործընթացը հեշտացնելու նպատակով։

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մի քանի հիմնական գործոններով՝

1. Ճարտարապետական անգլերենը միաժամանակ ունի և՛ տեխնիկական, և՛ ազգային բնույթ, ինչը պահանջում է ուսուցման հատուկ մոտեցում՝ հաշվի առնելով լեզվամտածողության առանձնահատկությունները:
2. Ոլորտում առկա է միջազգային տերմինների և հասկացությունների շարունակական աճ, որը պահանջում է ուսուցման մեթոդների կանոնավոր թարմացում:
3. Մասնագիտական տեքստերի բազմազանությունը (նախագծեր, զծագրեր, հաշվետվություններ, պատվերներ) պահանջում է համակարգված մոտեցում դրանց ուսուցմանը:
4. Անհրաժեշտություն կա մշակելու տեխնիկական բնույթի ճարտարապետական տեքստերի հետ աշխատանքի հատուկ մեթոդաբանություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության նախնական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, խնդիրները: Բավականին լավ է ներկայացված հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ճարտարապետական տեքստերի ընտրության եվ ուսուցման հիմնախնդիրը տեխնիկական բուհում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացնում է «Մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության և ուսուցման սկզբունքները տեխնիկական բուհում», որտեղ դիտարկում է տեխնիկական բուհում ճարտարապետական տեքստերի ընտրության և ուսուցման խնդիրները, տեքստերի տեսակներն ու

ընտրության սկզբունքները՝ հաշվի առնելով ուսանողների կարիքները և դասընթացի նպատակները:

Հեղինակը ճարտարապետական տեքստերը ուսումնասիրում է գիտական, խոսակցական և պաշտոնական ոճերի համադրությամբ: Առանձնացնելով Խոլոդովայի տեսությունը, ըստ որի ճարտարապետությունն անցել է երեք շրջան՝ արվեստ-արհեստ, արվեստ-տեխնիկա և գիտատեխնիկական շրջան, ատենախոսը հաշվի է առնում ճարտարապետական տեքստերի բազմազանությունը բառապաշարի ընտրություն իրականացնելիս:

Ատենախոսն անդրադառնում է "կրեոլային տեքստ" հասկացությանը, որը միավորում է խոսքային և պատկերային տարրերը: Ճարտարապետական գերտեքստը դառնում է ուսումնասիրության առանձին օբյեկտ՝ թույլ տալով ոչ գծային ուսուցում: Ճարտարապետական հասկացությոը դիտարկվում է որպես մասնագիտական բառապաշարի ուսուցման հիմնական միավոր:

Երկրորդ՝ «Ճարտարապետական կողմնորոշման բառապաշարի ընտրության եվ ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում» ենթագլուխը ներկայացնում է ճարտարապետական անգլերեն ենթալեզվի բառապաշարի առանձնահատկությունները: Ուսումնասիրվում է տերմինաբանությունը՝ համագիտական, միջգիտական և նեղ մասնագիտական մակարդակներում: Տերմինաբանությանը բնորոշ են բարդությունը, հոմանիշությունը և փոխառությունների առկայությունը:

Բառապաշարի դասակարգումն իրականացվում է ըստ կառույցների, գործիչների, տեխնիկաների և շինանյութերի անվանումների: Հեղինակն անդրադառնում է եզրույթների ծագումնաբանական վերլուծությանը (օրինակ՝ Միրոնովայի հետազոտությունը door-ի տարատեսակների վերաբերյալ) և մանրակրկիտ բացահայտում է դրանց զարգացման և կիրառման առանձնահատկությունները: Առաջարկվում է բառապաշարի ընտրության ժամանակ հաշվի առնել նաև

գերհասկացողները ("տուն", "բնակարան" և այլն)՝ զուգակցելով դրանք համապատասխան պատկերներտով և տեքստերով:

Երրորդ՝ «Ճարտարապետական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները» ենթագլուխը սահմանում է անհամարժեք բառապաշարը և առաջարկում է դրա ուսուցման հասկացության մոտեցում: Այս մոտեցումը թույլ է տալիս ուսումնասիրել տերմինների իմաստային և զուգորդական դաշտերը ժամանակային տարբեր կտրվածքներում: Հաստատվում է թեմատիկ մեթոդի արդյունավետությունը հասկացությունների և հասկացությունների ուսուցման գործում:

Երկրորդ գլուխը՝ «Մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները տեխնիկական բուհում», որը բաղկացած է երեք ենթագլխից, ուսումնասիրում է ճարտարապետական բառապաշարի ուսուցման մեթոդները և դրանց արդյունավետությունը:

Առաջին՝ «Անգլերեն ճարտարապետական բառապաշարի ուսուցման ռազմավարությունները» ենթագլխում քննարկվում են ուսուցման ժամանակակից ռազմավարությունները: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում Սիզեմինայի յոթ՝ դրդապատճառային, գրաֆիկական, մեմոտեխնիկ, լեզվահամակարգչային, հավանական կանխատեսման, փոխհատուցող և ռեֆլեքսիվ ռազմավարություններին: Կարևորվում է նաև արմատական բառերի և թարգմանչական կեղծ բարեկամների ուսուցումը (օրինակ՝ ագորա-agora, անօդանավակայան-airport):

Երկրորդ ենթագլուխը՝ «Ճարտարապետական տեքստերի ընթերցման ռազմավարությունները», ներկայացնում է տեքստերի ընթերցման մեթոդները, ներառյալ ամփոփումների ընդգծում, կանխագուշակող ուղեցույց, համագործակցային ծանուցում, դժվար հարցադրում, հղումներ և փոխադարձ ուսուցում: Բոլոր այս մեթոդները նպաստակաուղղված են բառապաշարի փոխներգործուն ուսուցմանը:

Երրորդ՝ «Անգլերեն ճարտարապետական ենթալեզվի ուսուցման կադապար արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը» ենթագլխում

ատենախոսը ներկայացնում է ճարտարապետական բառապաշարի ուսուցման օրինակելի մոդելը, որը միավորում է բառապաշարի ուսուցման հիմնական սկզբունքները, ընթացակարգերը, մասնագիտական ընթերցանության ռազմավարությունները և համապատասխան վարժությունների համակարգը:

Մեթոդական համակարգը հիմնված է ավանդական և կրեոլ տեքստերի ու գերտեքստերի համակցված կիրառման վրա: Ուսուցման գործընթացում օգտագործվում են բազմազան մեթոդներ, ներառյալ զուգորդման և նկարների կիրառումը, հոմանիշների և հականիշների օգտագործումը, խաղային տարրերը (բառախաղ, խճանկար), ինչպես նաև ուղղորդված զրույցները և հարցադրումները: Ուսուցումը կազմակերպվում է երեք հիմնական փուլերով. նախատեքստային փուլում իրականացվում են մտազրոհ և նախագուշակում, զուգորդումներ լուսաբանումներով և նախնական քննարկումներ, տեքստային փուլում ուսանողները լրացնում են աղյուսակներ, մասնակցում դերային խաղերի և քննարկումների, իսկ վերջին՝ հետտեքստային փուլում կազմակերպվում են ներկայացումներ, գրվում են նամակներ և շարադրություններ, անցկացվում են վիկտորինաներ և խաչբառեր:

Հետաքրքրական է նախագծային մեթոդի երեք հիմնական փուլերով ներառումը ուսուցման գործընթացում: Առաջին փուլում կատարվում է տեքստի ընթերցում կամ դիտում և առանցքային բառերի առանձնացում, երկրորդ փուլում իրականացվում է բառապաշարի յուրացում և կիրառում, իսկ երրորդ փուլում կատարվում է համեմատական վերլուծություն և անհամարժեք բառապաշարի ուսումնասիրություն: Փորձարարական ուսուցումը, որն իրականացվել է ԵՃՇՀ-ի ճարտարապետության և շինարարական տեխնոլոգիաների ֆակուլտետներում, տևել է մեկ տարի: Հետազոտությանը մասնակցել է երկու խումբ՝ փորձարարական (45 ուսանող) և ստուգողական (44 ուսանող): Փորձարարական խմբում ավարտական փուլում իրականացվել է նախագծային աշխատանք՝ չորս ենթախմբերի մասնակցությամբ: Նպատակն էր ճարտարապետական տարբեր ոճի տեքստերի միջոցով յուրացնել տերմինները և անհամարժեք բառապաշարը:

Փորձարարական ուսուցման ընթացքում ուսանողների լեզվական կարողությունները գնահատվել են տասը հիմնական չափանիշներով, որոնք ներառում են՝ տեքստի ընկալում և վերլուծություն (ճարտարապետական տեքստերի ճանաչում և ընտրություն, մասնագիտական տերմինների նույնականացում, խոսակցական և անհամարժեք բառապաշարի տարբերակում, տեքստի վերլուծական ընկալում), գործնական հմտություններ (ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, ուսուցման նորագույն ռազմավարությունների օգտագործում, տեքստերի թարգմանություն, մասնագիտական հաղորդակցում) և գնահատում (թղթապանակների՝ պորտֆոլիոների ստեղծում և կառավարում):

Այսպիսով, հետփորձարարական անկետավորման և թեստավորման արդյունքները հաստատել են առաջադրված գիտական վարկածը՝ ապացուցելով ռազմավարության արդյունավետությունը:

Հետազոտության եզրակացություններն արտացոլում են նրա առաջադիր խնդիրները, ամբողջական են, տրամաբանորեն փոխկապակցված: Հետազոտության ընթացքում օգտագործած գրականությունն արդիական է: Սեղմագիրը և հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ են կառուցված:

Ինչ վերաբերում է թերացումներին և վրիպումներին, ապա կարող ենք նշել հետևյալը

1. Ատենախոսն առաջարկում է հասկացույթները յուրացնել կրեոլ տեքստերի միջոցով, սակայն չի հիմնավորվում, թե ինչու հենց այս մոտեցումն է «նպատակահարմար և արդյունավետ»: Էջ 90
2. Ատենախոսը հստակորեն չի նշում, թե ինչ աշխատանք է առաջարկում իրականացնել անահամարժեք բառապաշարի հետ հասկացութային մոտեցման տեսանկյունից:
3. Էջ 135 -ում նշվում է, որ եզրույթները կարող են լինել միջազգային բառեր և

4. Ընդհանուր առմամբ, ատենախոսության մեջ կարելի է նշել ոճական բնույթի որոշ վրիպումներ:

Պաշտոնական ընդդիմախոս,
մանկ, գիտ. թեկնածու, դոցենտ

W.H.

Ս. Խ. Բաղդասարյանի ստորագրությունը
Հաստատում եմ՝ ՀԴԽՀ-ի գլխավոր տնօրենը

Р.  У. У.

Մ. Մ. Իսապիրյան



17. 03. 2025թ.